ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՀՍՍՀ ԳԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ապրիլի 12—13-ը ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի ունեցավ «Էթնիկ ինքնագիտակցությունը և ազգային մշակույթը» ընդհանուր թեմայով դիտատեսական սեմինար, որի շրջանում նիստերի ընթացքում լսվեցին յոթ զեկուցում։ Զեկուցումներում արված հարցադրումները, զեկուցողների առաջադրած կարևորագույն դրույթները գիտական բուռն վեճերի ու մտքերի ակտիվ փոխանակության նյութ դարձան։

Բացման խոսքի փոխարեն նախատեսված «Ազգագրությունը և քաղաքականությունը» թեմայի շուրջ խոսեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Լ. Աբրահամյանը։ Ազգագրական ու էթնոհոգեբանական բնույթի հետազոտությունների ճշմարիտ արդյունքները պետք է դառնան ինչպես միջպետական հարաբերությունների կարգավորման՝ արտաքին քաղաքականության, այնպես էլ բազմազգ երկրների ներքին քաղաքականության հիմնական սկզբունքների մշակման կարևորագույն ելակետերից մեկը։ Մինչդեռ քաղաքականությունը միշտ չէ, որ հաշվի է նստում պատմականորեն ձևավորված այս կամ այն մշակույթի առանձնահատկությունների հետ, նշեց Լ. Աբրահամյանը։ Ազգագրական գիտելիքները, աշխարհի տարբեր ժողովուրդների նիստ ու կացի, վարք ու բարքի, էթնիկ հոգեբանության բնորոշ գծերի իմացությունը կարևոր գրավական են տվյալ էթնիկ ու մշակութային միջավայրում ճիշտ քաղաքականություն վարելու համար։

Սեմինարի կենտրոնական հարցերից մեկը դարձավ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ա. Հակոբյանի «Հայոց Արևելից կողմանց բնակչության տեղական ինքնագիտակցությունը և մշակութային պրոցեսները 6—10-րդ դդ.» զեկուցումը։ Զեկուցողը սեմինարի մասնակիցների քննարկմանը ներկայացրեց այն դրույթը, որ IX—X դդ. պատմական Արցախ և Ուտիք նահանգներում քաղաքական, տնտեսական ու մշակութային որոշակի պայմաններ էին ստեղծված այդ կողմերի հայ բնակչության մեջ էթնոանշատողական միտումների դրսևորման համար։ Հիմնականում աղբյուրագիտական բնույթի փաստարկումների վրա հիմնվող իր այս միտքը խորացնելով, նա նշեց, որ հակված է կարծելու, թե հիշյալ դարերում Հայոց Արևելից կողմերում առկա էին բոլոր հիմքերը՝ առանձին էթնոս ձևավորվելու համար։

Ելույթ ունեցողները նշեցին, որ նման եզրակացության գալու համար նախ և առաջ պետք է հաշվի նստել տարաբնույթ աղբյուրների բացակայության հետ, որ ավատական շրջանին բնորոշ անջատողական տրամադրությունները չպետք է դիտել էթնոանջատողական, այլապես ինչո՞վ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ էթնոմիավորիչ ձգտումներն Արևելից կողմերում վերստին գլուխ բարձրացրին XVII—XVIII դդ. սկսած (Հ. Պետրոսյան)։ Առաջ քաշվեց նաև այն միտքը, որ Արցախը և Ուտիքը չէին կարող ընդգրկվել Հայաստանի ավատական հարաբերությունների ոլորտը, քանզի դրանց զարգացումն ընթանում էր Աղվանից մարզպանության կազմում, ձախափնյա Աղվանքի հետ համատեղ։ Իսկ մշակութային առումով Հայոց Արևելից կողմանց բնակչությունը վարում էր էթնոձիգ, ուրեմն և՝ կենտրոնաձիգ քաղաքականություն՝ հայ մշակույթի զարգացման ոլորտն ընդգրկելով բուն Աղվանքի էթնիկ միավորները։ Ինչպես էթնիկ կողմնորոշմամբ, այնպես էլ մշակութային հանրությամբ աջափնյա Աղվանքը մնում էր հայկական, մի բան, որ լավագույնս ապացուցվում է հետմարզպանական շրջանում այստեղի բնակչության հայկական էթնիկ ինքնագիտակցության և հայկական մշակույթի անընդհատությամբ (Հ. Առաքելյան)։ Ուշադրություն հրավիրվեց և այն փաստին, որ ավատական մասնատվածության պայմաններում աշխարհի ոչ մի երկրում չի գիտվել որևէ էթնոսի ձևավորում (Ֆ. Տեր-Մարտիրոսով)։ Բերվող հակակշռություններից մեկն էլ այն էր, որ Հայկական լեռնաշխարհում սկզբնապես ունենք խիստ որոշակի սահմանագծով մի տարածք՝ այստեղ իրար հաջորդած բոլոր պետական միավորումներով։ Ուրեմն՝ ոչ թե այդ պետությունները են ընտրել իրենց վարչական սահմանները, այլ այստեղ բնակվող էթնիկ հանրությունն է թելադրել դրանք։ Իսկ Արցախն ու Ուտիքը, սկսած Երվանդյաններից, միշտ եղել են Մեծ Հայքի կազմում՝ մինչև մարզպանության ստեղծումը։ Ինչ վերաբերում է անջատողական միտումին, ապա այն ավելի շատ կապվում է եկեղեցական վարչապետության ինքնուրույնության ձգտումների, քան մարզպանության գոյության հետ (Ա. Սահակյան)։ Կարևորվեց նաև, որ այս հարցում որոշակի պարզություն կարող է մտցնել հայ էթնիկ ինքնագի-

տակցության վերջնական ձևավորման ժամանակի ճշտումը։ Եթե այն արդեն հաստատված էր մինչև V դարը, ապա լուրջ բան չէ Աղվանից մարզպանության կազմում ընդգրկված հայ բնակչության միջավայրում մեկ այլ՝ նոր էթնոսի ձևավորվելու մասին խոսելը։ Միաժամանակ նշվեց, որ դրավոր աղբյուրներում փաստորեն ներկայացված են մարզպանության սոսկ աշխարհիկ ու հոգևոր վերնախավի մտածելակերպն ու կոդմնորոշումները, որ չի կարելի տարածել տեղական ողջ բնակչության վրա, մանավանդ, որ մշակութային պրոցեսները ևս հնարավոր է գիտել զուտ պրոֆեսիոնալ մշակույթի շրջանակներում (Զ. Խառատյան)։

էթնիկ ու դավանական ինքնագիտակցության հարաբերակցության հարցին էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու Հ. Առաքելյանի զեկուցումը (Արևելագիտության ինստիտուտ), որը մասնավորապես վերաբերում էր Այսրկովկասի էթնիկ միջավայրին։ Սկզբնապես հայ, ապա և վրաց էթնոսների համար քրիստոնեությունն էթնիկ ինքնահաստատման և ինքնադրսևորման ձևերից մեկը դարձավ, ինչը և պայմանավորեց հետագայում վրաց եկեղեցու անջատումը հայկականից։ Աղվանքի բազմէթնիկ կազմի համար, որպես համընդհանուր գաղափարախոսություն, քրիստոնեությունը բարենպաստ էթնոմիավորիչ հող ստեղծեց։ Բայց մահմեդական ու թրքալեզու էթնիկ խմբերի ներթափանցումն Աղվանք էապես շրջեց տակավին համախմբման պրոցեսում գտնվող աղվանական ցեղերի էթնոմշակութային զարգացման ուղին՝ փոխադրելով այն մահմեդական կրոնի և թուրքերեն լեզվի հենք։ Ավելի ուշ, տեղաբնիկ ու եկվոր տարրերի միաձուլումից առաջացած էթնիկ միավորը հայտնի դարձավ «թաթար» հավաքական էթնոնիմով և «մուսուլման» կոնֆեսիոնիմով։ Այս տերմինները հաճախ համարժեք էին և գործածվում էին նույն մակարդակի վրա՝ մատնանշելով խիստ որոշակի էթնիկ հանրություն և հակադրելով այդ հանրությունը նույն կրոնին պատկանող հարևան էթնիկ խմբերին։ Այդ պայմաններում աղվանական էթնիկ խմբերից մինչև մեր օրերը գոյատևող միակ միավորը՝ ուդիների համար էթնոպահպան վճռորոշ գործոնի դեր խաղաց հայադավանությունը, որն էլ հանգեցրեց նրանց երկակի ինքնագիտակցության. ուդիներն իրենց համարում են հայ ժողովրդի ուդիախոս հատված։

Ազգային ինքնագիտակցության ձևավորման ու հաստատման մեխանիզմների բացահայտումն ու պարզաբանումը սեմինարում արծարծվող առավել հետաքրքիր ու կարևոր հարցերից էին։ Ներկայումս տարբեր էթնիկ միջավայրերում գործող ինքնահաստատման տարաբնույթ միտումները Լ. Աբրահամյանի կարծիքով կարելի է ներկայացնել չորս հիմնական մոդելի տեսքով՝ 1) էթնոսի «մշակութային ծառի» բնից հատվում և հեռացվում են տվյալ մշակույթի մեջ օտարածին դիտվող ճյուղերը։ Ազգային անխառն մշակույթ ունենալու այս միտումը, նպատակ ունենալով հաստատելու ազգի ինքնությունը, իրականում հանգեցնում է տվյալ մշակույթի պարզունակացմանն ու աղքատացմանը։ 2) Այլածին մշակութային ու էթնիկ տարրերի դեմ էթնոսը պայքարում է ոչ թե ներկայում, այլ հեռավոր անցյալում՝ իր ազգային մշակույթի ժառանգորդության ծառարունն այլ էթնիկ ճյուղերից զերծ տեսնելու մտայնությամբ։ 3) էթնոսը փնտրում է և գտնում հեղինակավոր նախի՝ իր ծագումը կապելով բարի համբավ ու համընդհանուր ճանաչում ունեցող նախնու հետ։ 4) էթնոսն իր մշակութային ծառարնին է միացնում ամենատարբեր էթնիկ հանրությունների մշակութային ձեռքբերումները։ Ըստ որում, դա արվում է ոչ թե որոշակի փուլի, այլ պատմական ցանկացած ժամանակի համար։ Այս չորս մոդելների ընդհանուր բնութագրական գիծն այն է, որ բոլորն էլ ձգտում են ծագած կամ հիմնված լինել աշխարհի կենտրոնում (դիցաբանական առումով)։

Այս խնդրի շուրջ ծավալված ելույթներում ուշադրություն հրավիրվեց այն հանգամանքին, որ առաջադրվող մոդելները խիստ պայմանական են և դրանց էթնիկ սահմանները չեն կարող բացարձակ լինել։ Միաժամանակ նշվեց, որ հիշյալ մոդելները կարող են հետագա հնարավոր ճշգրտումներ ունենալ և դառնալ առավել համապարփակ, եթե ամեն կոնկրետ դեպքի համար որոշակիացվեն այն պատմական, սոցիալ-բարոյական, քաղաքական, տնտեսական ու էթնիկական պայմաններն ու միջավայրը, ուր առաջանում, հաստատվում, ապա և՝ շրջանառվում է ինքնագիտակցության տվյալ կոնկրետ կաղապարը (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Զ. Խառատյան, Ռ. Օհանջանյան, Ա. Պետրոսյան)։

Ինքնագիտակցության և ազգային մշակույթի փոխպայմանավորվածության իրողությունն առավել ակնառու է սփյուռքահայ համայնքների միջավայրում։ Այս խնդրին նվիրված իր զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Է. Մելիքոնյանը (ՀՍՍՀ ԳԱ Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժին) ցույց տվեց, որ սփյուռքահայ այն համայնքներում, ուր պահպանվում են հայոց լեզուն, դպրոցը, գրականությունը, և շփումներն ակտիվ են ազգային հանուր մշակույթի հետ, անհամեմատ կայուն է նաև ազգային ինքնագիտակցությունը։ Ընդհակառակը՝ էթնիկ ինքնագիտակցության աստիճանական կորուստ է նկատվում ազգային մշակույթին հետզհետե անմասն դարձող համայնքներում։ Վերջին դեպքի համար բնորոշն այն է, որ ան-

հատն ինքն է որոշում իր էթնիկ պատկանելության ու նաև՝ գիտակցության հարցը։ Հատկանշական է, որ համայնքի դավանական պատկանելությունը երբեմն հակադրվում է էթնիկ ընդհանուր պատկանելության գաղափարին։

Ինքնապատկերացումները ազգային ինքնագիտակցության հաստատուն բաղադրիչներից են, որոնք շատ հաճախ արտացոլվում են լեզվական (ինչպես գրական, այնպես էլ բանահյուսական) տեքստերում։ Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գիտաշխատող Ա. Գուլյանի զեկուցման նպատակը սփյուռքում և Հայաստանում գործածվող և ինքնակարծիքն արտահայտող լեզվական տեքստերի հիման վրա ազգային բնավորության բացահայտումն էր։ Այդ տեքստերը վկայում են, որ հայ ժողովուրդն իր ազգային գիմորոշ գիծը համարում է անմիաբանությունը։ Սակայն ակնհայտ է, որ ինքնապատկերացումն իրականության հետ քիչ է հաշվի նստում՝ հաճախ առաջադրելով այնպիսի պահանջներ, որոնք համանչուն չեն տվյալ սոցիալ-քաղաքական ու տնտեսական իրավիճակին։ Հասարակական միտքն անմիաբանության արգասիք է համարում նույնիսկ ավատական մասնատվածությունը։ Ինքնագիտակցությունն ինքնապատկերացման միջոցով թույլ է տալիս երկու տրամաբանական սխալ. 1) պատմական ընթացքի արդյունքը (հայերի երկու մասի բաժանված լինելը) համարում է ազգային բնավորության արդյունք, 2) ազգի բնավորությունը բխեցնում է այդ երկատված լինելու հատկանիշից։ Բազում այլ փաստարկումներով Ա. Գուլյանը ցույց տրվեց, որ հայ ազգի էթնորոշիչ գիծը ոչ թե անմիաբան լինելն է, այլ ինքնախարազանման հոգեբանությունը։

Այս առթիվ արտահայտվեց այն միտքը, որ ինքնապատկերացումը կարելի է դիտել իբրև մի երկակի հակադրություն, որն ունի ժխտողական և հաստատողական երկու եզր։ Հակառակ այդ եզրերից առաջինը հասցնում է ինքնախարազանման, իսկ երկրորդը՝ ինքնագովերգման։ Ասել է թե ազգն ունի երկու հայացք. հայացք դեպի ներս և հայացք դեպի դուրս։ Հայերն, օրինակ, դեպի ներս նայելիս ասում են. «Վասակի դավաճան ազգն ենք», իսկ դեպի դուրս նայելիս՝ «Վարդանանց միաբան ազգն ենք» (Հ. Պետրոսյան)։ Փորձ արվեց նաև ինքնախարազանման հոգեբանությունը բացատրել քրիստոնեական հոգեբանությամբ՝ թե. «Աստված պատժում է մեզ մեր գործած մեղքերի համար» (Ֆ. Տեր-Մարտիրոսով)։ Մի բացատրություն, որ մերժվեց այն պատճառաբանությամբ, որ հայերն իրենց ազգային բնավորությունը գտան քրիստոնեական վարդապետության մեջ, որ քրիստոնեության ընդունումը հայերի ինքնաղրսևորման եղանակներից մեկն էր, նրանց էթնիկ հոգեբանության արտահայտչաձևը (Ս. Հարությունյան)։

Սեմինարի վերջում մասնակիցները լսեցին Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Օհանջանյանի հաղորդումը 1988 թ. մարտի 28—30-ը Մոսկվայում կայացած «Հոգեբանական գիտության խնդիրներն ազգամիջյան հարաբերությունների բարելավման գործում» աշխատանքային խորհրդակցության արդյունքների մասին։ Խորհրդակցության հիմնական ուղղվածությունն այն էր, որ ազգային հարցի և ազգամիջյան հարաբերությունների կարգավորման բնագավառում ՍՍՀՄ-ում տակավին շատ անելիքներ կան, որ այդ բարդ ու նրբին խնդրի ճշմարիտ լուծման գործում հույժ շահեկան կարող են լինել հոգեբանության, ազգագրության, սոցիոլոգիայի և հարակից այլ գիտությունների համատեղ հետազոտությունները և կոնկրետ ծրագրերի առաջադրումը։

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտատեսական սեմինարը այդպիսի մոտեցման մի փորձ էր։ Սեմինարի գիտական լայն ընդգրկումների վկայությունն այն էր, որ այնտեղ բախվեցին պատմաբանի, աղբյուրագետի, ազգագրագետի և էթնոսոցիոլոգի մասնագիտական հայացքներն ու մոտեցումները՝ մեկ որոշակի խնդրի, էթնիկ ինքնագիտակցության տարաբնույթ դրսևորումները գիտականորեն ճանաչելու պրոցեսում։

Սեմինարի ողջ ընթացքը ձայնագրված է և պահվում է ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում։

* * *

Ապրիլի 19—21-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհրդի (նախագահ՝ Զ. Խառատյան) կազմակերպած հերթական VIII կոնֆերանսը։ Այն անց է կացվում երկու տարին մեկ և ըստ էության հանրապետական բնույթ ունի, քանզի նրա աշխատանքներին մասնակցում և զեկուցումներով հանդես են գալիս հանրապետության գրեթե բոլոր հայագիտական կենտրոնների երիտասարդ մասնագետները։ Այս անգամ ևս կոնֆերանսի ավելի քան 60 մասնակիցները ներկայացնում էին 23 հիմնարկ։

Զեկուցումների թեզիսները (երկլեզու՝ հայերեն կամ ռուսերեն, պատմական գիտությունների թեկնածուներ Զ. Խառատյանի և Հ. Պետրոսյանի խմբագրությամբ) վաղօրոք հրատարակված էին, ուստի և կոնֆերանսի ծրագիրն այնպես էր կազմված, որ կարդացվի զեկուցումների միայն մի մասը, իսկ մյուս մասը քննարկվի և ըստ հարկի բացահայտվի գրանցում բարձրացվող հիմնադրույթների վիճարկման միջոցով։

Կոնֆերանսը բացեց ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Գ. Տիրացյանը: Ողջունելով մասնակիցներին, նա ասաց, որ ինստիտուտում վաղուց ավանդական դարձած երկու՝ հնագիտական և ազգագրական-բանագիտական դաշտային հետազոտությունների արդյունքներն ամփոփող գիտական նստաշրջանների կողքին լինելության իրավունք է նվաճել նաև երիտասարդ գիտնականների կոնֆերանսը: Ուրախալին ու հուսադրողն այն է, որ նրանում կարդացվելիք զեկուցումները ներկայացնում են հայ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի ամենատարբեր ոլորտները մի շարք գիտակարգերի՝ հնագիտության, ազգագրության, բանագիտության, էթնոսոցիոլոգիայի, լեզվաբանության, արվեստաբանության, ճարտարապետության և այլ հայեցակետերով: Իսկ դա նշանակում է, որ մեզանում ձևավորվում է հայագետների մի նոր սերունդ, որը մեր ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերը սկսում է դնել ոչ թե մեկուսի, իրարից անջատ, այլ օրգանական սերտ կապի ու փոխպայմանավորվածության մեջ՝ հայագիտություն կազմող տարբեր գիտությունների հետազոտական ոլորտների համատեքստում:

Կոնֆերանսի եռօրյա աշխատանքն այնպես էր ծրագրված, որ թեմատիկ և ժամանակագրական ընդգրկման առումով առավել մոտիկ զեկուցումները լսվեն ու քննարկվեն նույն նիստի կամ գոնե՝ նույն օրվա ընթացքում: Այս առումով ուշագրավ էին հիմնականում հնագիտական նյութերով հին Հայաստանի մշակույթի տարբեր կողմերը բացահայտող զեկուցումները: Մեծ հետաքրքրությամբ լսվեցին և բուռն վիճարկման նյութ դարձան Հ. Սիմոնյանի «Վանակատը և կայծքարը որպես թաղման ծեսի անհրաժեշտ տարրեր», Վ. Հովհաննիսյանի «Քարաշամբից հայտնաբերված զարդանախշ դավաթի իմաստաբանությունը», Բ. Սադոյանի և Հ. Տարախչյանի «Հին Հայաստանի մի քանի նավատիպերի մասին» զեկուցումները: Առաջին օրվա երկրորդ նիստի զեկուցումները հիմնականում ազգագրական բնույթի էին՝ նվիրված ժողովրդական տարազի զարդանախշերի իմաստաբանության (Ա. Ստեփանյան), մանկական հագուստի տիպաբանման (Ս. Պողոսյան), նորածնի խնամքին և մանկական հիվանդությունների բուժման ժողովրդական եղանակների (Ա. Մինասյան), կնոջ հանդեպ կիրառվող արգելանքների (Ա. Սարգսյան) և այլ հարցերի:

Կոնֆերանսի երկրորդ օրն ամբողջությամբ նվիրված էր մշակույթի ուսումնասիրության սեմիոտիկ հայեցակետերը բացահայտող թեմաներին: Կոնֆերանսի «Մշակույթ և լեզու» ենթավերնագիրը, մասնավորապես, կյանքի էր կոչված այն իրողությամբ, որ նրանում կարդացված զեկուցումների մի զգալի մասն արծարծում էր մշակութային այլազան տեքստերի կառուցվածքային ու իմաստաբանական վերլուծության խնդիրներ: Այդպիսիք էին Լ. Աբրահամյանի «Թե ինչու դյուցազնը պետք է ունենա միայն մեկ զարկ», Վ. Հայրապետյանի «Կղզու գաղափարը», Ա. Գուլյանի «Էպիկական հերոսի ուղին», Ս. Զոլյանի «Մոգական գիրքը որպես սեմիոտիկ սարք», Ն. Երնջակյանի «Դիցաբանական տեքստերի երկու տիպ՝ աստղերի և համաստեղությունների մասին հայոց մեջ», Դ. Հովհաննիսյանի «Ինֆորմացիայի բանավոր փոխանցումից գրավորին անցնելու մեխանիզմի մասին», Զ. Խառատյանի «Հղէ կտրելու» սովորույթը և ուղու խորհրդիմաստը հայոց հարսանիքում», Հ. Պիկիչյանի «Նվագարանը- բնության և մարդու խորհրդանիշ», Հ. Մարությանի «Զվարթնոցը Նոյան տապանում», Ա. Իսրայելյանի «Հավկիթ պահպանակներ», Ս. Հմայակյանի «Կուսեռանուտ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում», Ա. Պետրոսյանի «Լեզվաբանական և առասպելական տվյալներն Ուրարտուի տիրապետող տարրի վերաբերյալ» զեկուցումները: Դրանցում արված հարցադրումներն ու քննարկման ներկայացված մտքերը որակապես նոր գիտարկումներ են երաշխավորում անցյալի ու ներկայի մշակութային արժեքների, էթնիկ մշակույթի համակարգում դրանց զբաղեցրած տեղի ու դերի, մշակութային ժառանգորդության վերհանման ու գնահատման մեզանում ավանդաբար ճանաչում գտած գիտական սկզբունքների ու մոտեցումների վերաիմաստավորման համար:

Հարցադրումների նորությամբ և գիտական մտքի թարմությամբ աչքի ընկան կոնֆերանսի երրորդ օրը կարդացված զեկուցումները, մասնավորապես՝ Գ. Ասատրյանի «Քրդերի նախահայրենիքի հարցը», Հ. Առաքելյանի «Ուդի» բարբառային բառի պատմական ակունքները», Գ. Հակոբյանի «Ծիսական ազգակցության մի քանի տերմինների մասին», Հ. Վարդանյանի «Գուլը և լույսը հայ ժողովրդական խաղիկների բառապաշարում (քանակական վերլուծության փորձ)», Ռ. Խաչատրյանի «Կրկնակների ծիսակատարողական գործառույթը»: Ներկաների մեջ պակաս հետաքրքրություն չառաջացրին նաև Ե. Զաքարյանի «Հերոսների արտաքինը «Սասնա ծռեր»-ում», Ա. Գրիգորյանի «Սուտ հիվանդ առյուծի սյուժեն ըստ Վարդան Այգեկցու, Եզովպոսի և «Կալիլա և Դիմնա»-ի բանահյուսական բնույթի, ինչպես նաև՝ ՀՍՍՀ-ում ամուսնալուծությունների պրոբլեմին (Կ. Սելիմյան) ու սեզոնային միգրացիային (Մ. Գալստյան) նվիրված էթնոսոցիոլոգիական բնույթի հաղորդումները:

Կոնֆերանսի աշխատանքներն ամփոփող իր եզրափակիչ ելույթում ազգագրության բաժնի վարիչ Դ. Վարդումյանը նշեց, որ 6 նիստում լսված ավելի քան 30 զեկուցումներում և դրանց քննարկման ընթացքում արծարծվեցին ինչպես հայ ժողովրդական մշակույթի տարբեր դրսևորումներին, այնպես էլ այլընթնիկ մշակութային փոխառնչություններին նվիրված տարաբնույթ ու բազմաբովանդակ հարցեր։ Նա հավաստիացրեց, որ կարդացված զեկուցումներից շատերը կատարյալ ու հասուն գիտական հետազոտություններ են, ուստի և արժանի՝ առանձին հոդվածների տեսքով լույս ընծայվելու։ Իրբև կոնֆերանսի բնորոշ առանձնահատկություն մատնանշվեց անկաշկանդ ու բանիմաց գիտական վեճ վարելու երիտասարդ մասնագետների կարողությունը։

ՋԱՎԵՆ ԽԱՌԱՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70 ԱՄՅԱԿԻՆ

Ս/թ ապրիլի 29—30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի XXIII գիտական նստաշրջանը՝ նվիրված անվանի հայագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀՍՍՀ պետական և Մաշտոցի անվան մրցանակների դափնեկիր, գիտության վաստակավոր գործիչ Լևոն Ստեփանի Խաչիկյանի ծննդյան 70 ամյակին։

Նստաշրջանը բացեց Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Արևշատյանը։ Նա նշեց, որ Լ. Խաչիկյանը պատկանում է սովետահայ պատմաբանների և բանասերների այն սերնդին, որը մեծ նվիրումով և նպատակասլաց գիտական գործունեությամբ լայնացրեց հայագիտության ավանդական շրջանակները, նոր սկզբնաղբյուրներով հարստացրեց հայ ժողովրդի բազմադարյան կյանքի պատկերը և մեծապես նպաստեց նրա պատմության համակողմանի և համակարգված լուսաբանմանը։ Խաչիկյան-գիտնականի վաստակը հայագիտության ասպարեզում այն խոշոր ներդրումն է, նկատեց Ս. Արևշատյանը, որ նա կատարեց որպես պատմաբան-միջնադարագետ և աղբյուրագետ, բացահայտելով հին ձեռագրերում պարփակված մի ամբողջ շարք անհայտ բնագրեր և բազմաթիվ նոր տեղեկություններ՝ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակույթի կյանքի վերաբերյալ։ Մյուս խոշոր վաստակը նրա գիտակազմակերպական գործունեությունն է՝ կապված Մատենադարանի, որպես հայագիտության եզակի օջախի կազմավորման և հետագա գործունեության հետ։ 1954—1982 թթ. լինելով Մատենադարանի տնօրեն, Լ. Խաչիկյանն իր շուրջ համախմբեց մի կուռ կոլեկտիվ, որն իր աշխատանքով Մատենադարանին արժանի ճանաչում բերեց ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Այնուհետև Ս. Արևշատյանն անդրադարձավ Լ. Խաչիկյանի գիտական և հասարակական գործունեությանը և ցույց տվեց, որ նրա կյանքն ու գործն անխզելիորեն կապված են Մաշտոցյան Մատենադարանի պատմության հետ։ Նրա անունը, վերջում շեշտեց Ս. Արևշատյանը, ընդմիշտ կմնա հայագիտության երախտավորների շարքում։

Այնուհետև «Հայոց կյանքի պատկերը «Առ անձն իւր» բանաստեղծության մեջ» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ե. Նազարյանը։ Նա հայտնեց, որ խնդրո առարկա բանաստեղծության ձեռագիր մի օրինակի վրա ժամանակին իր ուշադրությունը հրավիրել է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, որի մտահոգություններից մեկն էր իր աշխատակիցներին և առհասարակ Մատենադարանին առնչվող մասնագետներին օգնելը։ Անդրադառնալով «Առ անձն իւր» բանաստեղծության հեղինակի ինքնության, ստեղծման ժամանակի, արծարծած խնդիրների, հայոց դրավոր բանաստեղծության պատմության մեջ ունեցած տեղի հետ կապված հարցերին, Ե. Նազարյանը ցույց տվեց, որ նրա հեղինակն է XVIII դ. կրթական, լուսավորական շարժման նշանավոր գործիչ, աստվածաբան, փիլիսոփա, նարեկագետ Հակոբ Նալյանը (1706—1764) և որ բանաստեղծությունն արտացոլում է ժամանակի հայոց կյանքն իր ցավալի կողմերով։ «Առ անձն իւր» բանաստեղծությունը, եզրակացրեց զեկուցողը, հասարակությանն ապաքինելու, բարեփոխելու խիզախ քննադատանք է, չափարերված հշմարիտ մի ուղեցույց և մարդու ինքնահաստատման, կատարելության խորհուրդ ունի։

Լևոն Խաչիկյանի «Եղիշեի արարածոց մեկնությունը անտիպ աշխատությունը» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Տեր-Պետրոսյանը նշեց, որ Լ. Խաչիկյանի արխիվում պահվում են մի շարք պատրաստի հետազոտություններ, որոնք ժամանակին ինչ-ինչ պատճառներով չեն հրապարակվել։ Դրանցից մեկն է նշված աշխատությունը, որը Լ. Խաչիկյանն իրբև թեկնածուական դիսերտացիա պաշտպանել է 1945 թ.։ Նրանում հեղինակը բազմազան